

14

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2020

Luys Lnyju®



ԻՆՉՊԵՍ ԴԵՍՊԱՆ
ՍՎԻՏԱԼՍԿԻՆ ՏԱՐԸՆԹԵՐՑԵՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԻՆՉՊԵՍ ԴԵՍՊԱՆ ՍՎԻՏԱԼՍԿԻՆ ՏԱՐԸՆԹԵՐՑԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	1
1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ	3
2. ԴԵՍՊԱՆ ՍՎԻՏԱԼՍԿՈՒ «ԱՆԱՎԱՐՏ ՀԵՌԱԳՐԻ» ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	4
3. ԵՄ-ԱՄՆ-ՆԱՏՕ ԵՎ ՌԴ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ	7
4. 2013-ԻՑ ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐԸ ԵՎ ՀՀ-ԵՄ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ (ՀԸԳՀ) ԿՆՔՈՒՄԸ 2017-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻՆ.....	11
5. ԵՄ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ 2018Թ. ԱՊՐԻԼԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ. 2018Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ «ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ» ԵՆԹԱՏԵՔՍԸ.....	14
6. ԱՐՑԱԽՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՈՒՀԱՆԸ.....	17
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ.....	19

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանում և նրա շուրջ ներկայումս ընթացող աշխարհաքաղաքական բարդ գործընթացները պատշաճ գնահատելու, դրանց պատճառների մեջ խորամուխ լինելու, ինչպես նաև անցանկալի զարգացումները ժամանակին կանխարգելելու համար չափազանց կարևոր է պետական ապարատի արհեստավարժ և ներդաշնակ աշխատանքը: Իհարկե, երբեմն ներհայաստանյան քննարկումները և նույնիսկ մասնագիտական միտքը կարող են կաղապարված լինել տեղային կամ զգացական ընկալումներով, ուստի «դրսի հայացքը» հաճախ դառնում է չափազանց կարևոր թե՛ որոշում կայացնողի, թե՛ ընդհանուր հանրային դիսկուրսի բազմակողմանիության համար: Օրինակ, հայտնի է, որ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը հաճախ ընդունում էր արտերկրի հայտնի գիտական կենտրոնների մասնագետների՝ անձամբ նրանցից գնահատականներ լսելու համար՝ Հայաստանում կամ արտերկրյա այցերի ընթացքում: Երբեմն այդ հանդիպումները լինում էին հրապարակային: Չորրորդ և գործող նախագահ Արմեն Սարգսյանը նման հանդիպումների փոխարեն նախընտրեց մեծ համաժողովները, իսկ խորհրդարանական հանրապետության գործող վարչապետի նմանօրինակ հանդիպումների մասին ոչինչ հայտնի չէ:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակում տեղի են ունեցել մի շարք անկյունաքարային կարևորության իրադարձություններ, որոնք արտաքին հարաբերությունների և դրանց դինամիկայի վրա մեծ ազդեցություն են թողել: Այդպիսիք են, օրինակ, 2013-ին Եվրասիական տնտեսական միության ստեղծմանը մասնակցելու վերաբերյալ երկրի նախագահի որոշումը, 2014-ից ի վեր սոցիալական մանր ու միջին շարժումները, 2016թ. ապրիլյան պատերազմը և դրան հաջորդած դիվանագիտական փուլը, նույն թվականի հուլիսյան պատանդառությունը ոստիկանության Երևանի ՊՊԾ գնդի տարածքում, 2017թ. խորհրդարանական ընտրությունները, նույն թվականի նոյեմբերին ԵՄ հետ նոր շրջանակային համաձայնագրի կնքումը և, իհարկե, 2018թ. ապրիլյան հեղափոխությունը¹:

Այս չափազանց հետաքրքիր ժամանակաշրջանի ամենասկսիվ փուլում Հայաստանում Եվրոպական միության ներկայացուցչության ղեկավար (2015–2019թթ.), դեսպան Պյոտր Սվիտալսկին վերջերս իր հուշերը ամփոփ կերպով ներկայացրեց «**Հայկական հեղափոխություն. մի անավարտ հեռագիր**» կոչվող գրքույկով՝ հրատարակված Միջազգային հարաբերությունների լեհական կենտրոնի և

¹ Նշենք, որ «հեղափոխություն» տերմինը այստեղ կօգտագործվի այնպես, ինչպես ընդունված է հրապարակային դաշտում՝ անկախ դրա քաղաքագիտական անպատեհությունից:

Լեհաստանի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ: Իր հուշերում դեսպան Սվիտալսկին անդրադառնում է Հայաստանում իր գործունեության տարբեր դրվագների՝ հատկապես կենտրոնանալով ՀՀ-ԵՄ հարաբերությունների դինամիկայի, դարաբաղյան կարգավորման ներկա վիճակի և հատկապես՝ Հայաստանում 2018թ. ապրիլյան հեղափոխությունից անմիջապես առաջ և հետո տեղի ունեցած զարգացումների վրա:

Այսօրվա Հայաստանի իշխանությունների կողմից ապակուսակցական, մասնագիտական մտքի ու ընդհանրապես քննական մտածողության մարգինալացման շրջափուլում կարևոր է «դրսի հայացքը»՝ հատկապես, եթե դրա հեղինակը եղել է Երևանում հավատարմագրված բարձրաստիճան դիվանագետ: **Եվ քանի որ հեղինակը նաև փորձառու դիվանագետ է, նրա խոսքի և տեքստի մեջ կարևոր են դառնում փոքր նրբերանգները, այլ ոչ երկարաշունչ նախադասությունները:** Ընդհանրապես, նախկին դեսպանների հուշերը ընթերցելիս երեք խումբ հարցերի պատասխաններ ենք ակնկալում գտնել.

1. Նախ, թե ինչպե՞ս է վաստակաշատ դիվանագետը ընկալում և բացատրում իրավիճակի զարգացումը հյուրընկալ երկրում իր պաշտոնավարման ընթացքում, ինչպե՞ս է ներկայացնում քաղաքական որոշումների կայացման ներքին խոհանոցը՝ արտաքին փայլից ներս:

2. Որքանո՞վ և ինչպե՞ս է աջակցել իր երկրի քաղաքականության մշակմանը և իրագործմանը՝ աշխատելով դեսպանընկալ երկրի քաղաքական և հասարակական ուժերի հետ հանուն երկկողմ հարաբերությունների խորացման:

3. Եվ վերջապես՝ ի՞նչ ժառանգություն է թողել, և ի՞նչ է լինելու իրենից հետո՝ ջրհեղե՞ղ, թե՞ կամուրջներ ու հաղթակամարներ: Պատահական չէ, օրինակ, որ [ռումինացի Տրայան Հրիստեան](#) Հայաստանում ԵՄ ներկայացուցչությունը ղեկավարելուց հետո (2011-2015թթ.) գործուղվեց... հեռավոր Մոնղոլիա:

Սույն գրախոսությամբ մենք հանգամանորեն կանդրադառնանք այս չափազանց հետաքրքիր գրքույկում արտացոլված արտաքին քաղաքական խնդիրներին՝ օգնելով ընթերցողին առավել ընդգրկուն կերպով գնահատել Եվրոպական միության հայաստանյան գլխավոր ներկայացուցչի գնահատականները:

Բայց նախ պատեհ է հպանցիկ ներկայացնել նախորդ տասնամյակի զարգացումները միջազգային հարաբերություններում՝ ՀՀ-ԵՄ երկկողմ ու բազմակողմ հարաբերությունները համատեքստավորելու համար:

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ

Միջազգային հարաբերություններում փոքր պետությունների համար վերջին տասնամյակը կարելի է բնորոշել որպես այլընտրանքների կրճատման ու ճկուն դիվանագիտություն վարելու հնարավորությունների նվազման ժամանակաշրջան:

Ըստ էության, 2007-2008թթ. գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հասցրած վնասը մեծ տնտեսությունների միջև վստահության մթնոլորտին, եվրոպական ընտանիքում միասնականության առաջին ճաքերը (Հունաստան, Պորտուգալիա, Բրիտանիա), Միացյալ Նահանգներում Բարաք Օբամայի վարչակազմի (2009-2016թթ.) փաստացի «հեռացումը» հին աշխարհից և կենտրոնացումը ասիական երկրների ուղղությամբ և, վերջապես, նախագահ Դոնալդ Թրամփի «*իրանզակցիոն*» ու *իզոլյացիոնիստ* արտաքին քաղաքականությունը աստիճանաբար խորացրին մեծ տերությունների միջև ջրբաժանները: Առանձին տարածաշրջանների և հատկապես Եվրոպայի ու հետխորհրդային տարածքի նկատմամբ ԱՄՆ-ի անվտանգային հանձնառության նվազեցումը նոր հնարավորություններ ստեղծեց Ռուսաստանի համար: Նորից հայտնվեցին նոր բաժանարար գծեր, վերածնվեց սառը պատերազմյան «ազդեցության գոտի» եզրը, միջազգային համագործակցության ոգին ավելի հաճախ սկսեց ստորադասվել միակողմանիությանը: Ռուսաստանի և Չինաստանի աճող ինքնավստահությունը և ավելի պրոակտիվ ռազմավարությունը, համապատասխանաբար, հետխորհրդային և հարավչինական ծովի տարածաշրջաններում զգալիորեն նեղացրին ռեգիոնալ պետությունների ճկունության աստիճանը: Միայնակ մնացած Բրյուսելը, որի կախվածությունը ռուսական էներգակիրներից, չնայած գործադրված ջանքերին, նախորդ տասնամյակում տվել էր միայն հոետորական արդյունքներ՝ մասնավորաբար [ընական գազի դեպքում մնալով ընդհանուր կարիքների 1/3-ի մակարդակում](#), իսկ առանձին երկրների պարագայում՝ կեսից ավելի: 2003թ. Իրաքի պատերազմից ի վեր նավթի գների աճով և նախագահ Վլադիմիր Պուտինի աշխարհընկալմամբ պայմանավորված՝ Ռուսաստանը էլ ավելի սկսեց դեպի իրեն գրավել նախկին հետխորհրդային պետությունները, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական պետությունների հասարակություններին:

Հայաստանն այս առումով բացառություն չէ: 2008-ի օգոստոսյան պատերազմը առաջին զանգն էր նրա, որ աշխարհագրական մեկուսի վիճակում հայտնված և երկու հարևանների հետ փաստացի պատերազմի մեջ գտնվող փոքր երկրի համար արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը դաշնակցային հարաբերությունների անխաթարության ապահովումն է Ռուսաստանի հետ՝ իբրև

տնտեսական, ռազմական ու էներգետիկ անվտանգության երաշխավորի: Եվ նույնիսկ այդ վիճակում ՀԱՊԿ-ում նախագահող Հայաստանը կարողացավ խուսափել Աբխազիայի և Հարավային Օսիայի ճանաչումից՝ փաստարկելով, որ շրջափակված Հայաստանի համար հարևան Վրաստանի ու Իրանի հետ հարաբերությունները անձեռնմխելի են:

2009թ. Եվրոպական միությունը սկիզբ դրեց Արևելյան գործընկերություն կոչվող նոր ծրագրին, որի նպատակն էր «ռազմավարական կարևորություն» հաղորդել հետխորհրդային վեց պետությունների հետ քաղաքական, տնտեսական ու առևտրային կապերին: Ի տարբերություն հեղափոխական Վրաստանի և Ուկրաինայի, ինչպես նաև գրեթե Եվրոպայում գտնվող Մոլդովայի՝ Հայաստանը հայտարարեց ԵՄ-ին անդամակցության օրակարգ չունենալու, բայց հարաբերությունները նոր մակարդակի հասցնելու հանձնառության մասին: Հաջորդ երկու տարիները նշանավորվեցին արցախյան բանակցային գործընթացի մեզա-ակտիվացմամբ, ապա՝ տապալմամբ ռուսական Կազան քաղաքում, որին հետևեց լարվածության աճը շփման գծի երկայնքով ու միջպետական սահմանին: 2011-ից ի վեր Ադրբեյջանի կողմից սանձազերծված սպառնալիքության նոր մրցավազքը Հայաստանին դրդում էր առաջին հերթին կենտրոնանալ անվտանգության սպառնալիքների վրա և հետևաբար՝ Ռուսաստանի hard power-ին ապավինելուն, բայց չմոռանալով Եվրոպական soft power-ը ու բարեփոխումների օրակարգը: Միով բանիվ՝ արդյունքում ունեցանք հայթորքական սահմանի բացման տապալված հույսեր՝ Թուրքիայի ղեկավարության ճնշումներին չտրվելով, սահմանային լարվածություն՝ Ալիևի առավելապաշտական նկրտումների պատճառով, Ռուսաստանի հետ ռազմավարական գործակցության անայլընտրանք խորացում բոլոր ուղղություններով, ԱՄՆ-ի, Վրաստանի ու Իրանի հետ հարաբերություններում՝ բարեկամական ստատուս քվոյի պահպանում: Ավելի կարճ ասած՝ սա ընդամենը «աշխարհագրության վրեժխնդրության» դասագրքային օրինակ էր, ինչը լավագույնս նկարագրել է ամերիկացի հեղինակ Ռոբերտ Կապլանն իր համանուն գրքում: Այս ամենը երկրի ներսում գրեթե մշտական լարվածության ֆոնին՝ ի դեմս սոցիալական բողոքի ցույցերի, հատկապես 2013-2018 թվականներին՝ բացառությամբ 2017թ., որի արդյունքում տնտեսությունը սկսել էր շնչել:

2. ԴԵՍՊՊԱՆ ՍՎԻՏԱԼՍԿՈՒ «ԱՆԱՎԱՐՏ ՀԵՌԱԳՐԻ» ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանրապես, արդյո՞ք բոլոր ժամանակների ՀՀ իշխանությունները, հասարակական-քաղաքական ուժերը Հայաստանում ճիշտ են հասկացել

տարածաշրջանում և մեր երկրում ԵՄ քաղաքականության նպատակները: Արդյո՞ք այդպիսի ընդհանրական նպատակներ եղել են 28 անդամ երկիր ունեցող ԵՄ-ի համար: Որքանո՞վ է ԵՄ կողմից դրամական և/կամ քաղաքական աջակցություն ստացող շրջանակների կամ անհատների կողմից ստեղծվող դիսկուրսը համապատասխանում Բրյուսելի ընկալումներին: Ո՞րն է եղել ԵՄ դեսպանների դերը Հայաստանում: Որո՞նք են եղել 2013-ից քաղված դասերը ԵՄ-ի և Հայաստանի համար, և որքանո՞վ են դրանք արտացոլվել հաջորդիվ կայացված որոշումներում:

Սա միայն մակերեսն է այն հարցերի, որոնց պատասխանները գտնելու ակնկալիք կարելի էր ունենալ Հայաստանում 2015–2019թթ. պաշտոնավարած դեսպան Պյոտր Սվիտալսկու հուշերն ընթերցելիս:

Պետք է նշել, որ երկու այլ դիվանագետների գրքեր՝ Հայաստանում ՌԴ առաջին դեսպան Վլադիմիր Ստուպիշինի «Իմ առաքելությունը Հայաստանում. 1992-1994» (2001) և Մոլդովայում ԵԱՀԿ նախկին դեսպան և ԱՄՆ պետքարտուղարության [պաշտոնաթող դիվանագետ Ֆիլիպ Ռեմլերի](#) «Կովկասին շղթայված. խաղաղաշինությունը Ղարաբաղում 1987–2012» (2016) լայն դրական արձագանք են գտել ոչ միայն Հայաստանում՝ հենց ներքին խոհանոցի իրենց նկարագրություններով և առաջարկված դասերով ու լուծումներով: Ցավոք, Հայաստանի վերաբերյալ նման գրականության պակասը շարունակվում է:

«Հայկական հեղափոխություն. մի անավարտ հեռագիր» գրքում հեղինակը տարբեր խորությամբ անդրադարձ է կատարում չորս մեծ խնդիրների, որոնց քննարկմանն է նվիրված սույն գրախոսությունը.

- 1) ԵՄ-ԱՄՆ-ՆԱՏՕ և ՌԴ աշխարհաքաղաքական մրցակցությունը և Հայաստանի ընտրությունը,
- 2) 2013-ից քաղված դասերը և ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) կնքումը 2017-ի նոյեմբերին,
- 3) ԵՄ աջակցությունը Հայաստանի բարեփոխումների օրակարգին 2018թ. ապրիլից առաջ և հետո. 2018թ. հեղափոխության «աշխարհաքաղաքական» ենթատեքստը,
- 4) Արցախյան կարգավորման հնարավորությունների պատուհանը:

Հեղինակի ընդհանուր եզրակացությունը կարելի է ամբողջացնել մեկ մեջբերմամբ. **«Հանկարծ փրանսֆորմացիայի վերաբերյալ բոլոր զրույցները և ռեֆորմների աջակցությունը փաստամյակներ շարունակ ինչ-որ հրաշքով սկսեցին իմաստ ստանալ: ԵՄ-ը կարող էր ունենալ իր մոդեռնիզացիոն դերի աճ, եթե**

Հայաստանը գնահատեր սրտեղծված հնարավորությունը»: Եվ հենց այս մեջբերման մեջ է «թաղված շան գլուխը», որը կփորձենք վերհանել ստորև:

Բայց մինչ բուն շարադրանքին անդրադառնալը նշենք, որ սույն գրախոսությունը վերաբերում է դեսպան Սվիտալսկու գրքի միայն արտաքին քաղաքական կարևորություն ունեցող գնահատականներին և անդրադարձ չի կատարվելու ներքաղաքական նշանակություն ունեցող դիտարկումներին, այդ թվում՝ 2018թ. ապրիլյան հեղափոխության ներքաղաքական երանգներին:

Ցավոք, գրքում կարևոր բացահայտումներ կամ հայտնի իրադարձությունների նորովի մեկնաբանումներ չկան, բացառությամբ մեկ-երկու դրվագների, որոնց իսկությունը հավաստել հնարավոր չէ: Առաջինը՝ 2015թ. ընթացքում Հայաստանի վրա ճնշումներն են «Լավրովի պլանով» արցախյան կարգավորման հարցում, որտեղ, ըստ դեսպան Սվիտալսկու պնդման, ԵՄ-ն պատրաստ է եղել աջակցել ֆինանսական փաթեթներով: Եվ երկրորդը՝ 2016թ. սեպտեմբերին Կարեն Կարապետյանի վարչապետ նշանակվելու հարցն է, որը, ըստ հեղինակի, «որոշակիորեն հետաձգվել էր ապրիլյան պատերազմի պատճառով»:

Աշխատանքը ունի երկու հիմնական խնդիր. հուշերը և երկխոսությունները անձնավորված չեն ու անհնարին է որևէ կերպ հավաստել դրանց իսկությունը՝ միակ հնարավորությունը թողնելով հեղինակի նկատմամբ վստահությունը: Երկրորդ՝ չկա որևէ լուրջ մակարդակի վերլուծություն Հայաստանում ներքին ու արտաքին խնդիրների և ԵՄ քայլերի վերաբերյալ, հիմնականում տեղ է տրված հրապարակված՝ ճիշտ կամ սխալ, բայց հանրաճանաչ նառափիվներին: Պաշտոնաթող դեսպանների կամ այլ պաշտոնյաների հուշերի հաջողված փորձերը, սովորաբար, պատմում են ծառայության ընթացքում ձեռքբերումների և ծախողումների մասին, կամ հայտնի պատմությունների սեփական մեկնաբանություններ են, կամ էլ կիսվում են երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին առաջարկվող դասերով: Այս շարքում դեսպանը նկատ երկրի իշխանության քիմքին հարիր նառափիվների վերաշարադրումը և լեգիտիմացումը ամենաօգտակար գործը չէ և կրճատվելու է «Անավարտ հաղորդագրության» պիտանիության ժամկետը:

3. ԵՄ-ԱՄՆ-ՆԱՏՕ ԵՎ ՌԴ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին սկսեց իր առաքելությունը Հայաստանում (որն ի դեպ, ինչպես ինքն է գրում, առաջինն ու վերջինն էր լինելու ԵՄ պաշտոնյայի կարգավիճակում) 2015թ. սեպտեմբերին, ինչպես ինքն էր բնորոշել երկրի քաղաքական ղեկավարության հետ առաջին հանդիպումներում՝ քաղաքական հանձնարարություն ունենալով աջակցել ՀՀ-ԵՄ նոր իրավական փաստաթղթի շուրջ բանակցությունների ընթացքին: Թեև 2015թ. աշնան դրությամբ արդեն 18 ամիս ընթանում էր պատերազմը ուկրաինական Դոնբասում, և տեղի էր ունեցել Ղրիմի միացումը Ռուսաստանին, Կրեմլը, ըստ Սվիտալսկու, հետխորհրդային տարածքում չէր դիտարկում Բրյուսելին որպես մրցակից՝ ի տարբերություն Վաշինգտոնի: Ռուսական կողմը ներկայացնում էր Եվրոպան որպես «թույլ և տկար աշխարհաքաղաքական միավոր», որը չուներ անվտանգային ներուժ և հետևաբար, իբրև լավագույն օրինակ, «երբեք չէր կարողանալու Հայաստանում փոխարինել Ռուսաստանին անվտանգային երաշխիքների, ռազմական ներկայության կամ ռազմական արտադրանքի մատակարարման հարցերում»: Սա, ըստ դեսպանի, որոշակի հնարավորություններ էր ստեղծում:

Երկրորդելով 1996-ից ի վեր Հայաստանի գրեթե բոլոր իշխանություններին՝ Սվիտալսկին գրում է. «Ռուսաստանի հետ առանձնաշնորհյալ անվտանգային կապը Եվրոպայից հոսող զարգացման աջակցության, առևտրի և ներդրումների հետ ներդաշնակեցնելը փարհներ ի վեր հանդիսանում էր Հայաստանի պաշտոնական քաղաքականությունը: Հայաստանը ցանկանում էր օգտվել բոլոր հնարավոր հնարավորություններից: Երբ սկսվեցին Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները, երկրի նախագահը հայտարարեց, որ ԵՄ, ԱՊՀ և Եվրասիական ինտեգրացիոն գործընթացները չպետք է հակասեն միմյանց»:

Ավելին, խոսելով հետխորհրդային տարածքի երկրների հետ երկկողմ հարաբերությունների՝ ԵՄ-ՆԱՏՕ-ՌԴ աշխարհաքաղաքական մրցակցության թատերաբեմ դառնալու մասին, Սվիտալսկին կրկնում է Հայաստանում տարածված ոչ պաշտոնական մոտեցումը. «Հայաստանի իշխանությունները մինչև հեղափոխությունը հնարել էին մի բանաձև, որով փորձում էին խուսանավել Եվրոպա-Ռուսաստան մրցակցությունից՝ ներկայացնելով Ռուսաստանը իբրև աշխարհաքաղաքական, իսկ Եվրոպան՝ «քաղաքակրթական» ընտրություն... սակայն պայմաններից ելնելով՝ քաղաքակրթական ընտրությունը պատանդ էր մնում

աշխարհաքաղաքականությանը: Այս բալանսը ինչ-որ առումով արտացոլված էր նաև 2007թ. ընդունված «Ազգային անվտանգության ռազմավարությունում» և մնում էր, ըստ էության, անփոփոխ:

Թվում է, թե նման ընդհանրացումներ անող դիվանագետի եզրակացությունը պետք է լիներ մեկը, այն է՝ արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանի տարբեր իշխանությունները դրսևորել են շարունակականության նախանձեղի օրինակ: Փոխարենը նա գրում է. *«Ներկայիս (հեղափոխական) իշխանությունները հայտարարում են, որ չեն ցանկանում ընտրություն կատարել Արևմուտքի և Արևելքի միջև»*՝ ներկայացնելով այն իբրև հեղափոխական ձեռքբերում: Սա ընդամենը մեկն է այն օրինակներից, որ ցույց են տալիս գրքում առկա խորը ներքին հակասությունները՝ դեսպանի և սովորական մարդու ներքին պայքարը, որը թերևս ամենալավ հատկանիշը չէ դիվանագետի համար:

Իրականում Հայաստանի կառավարությունը դեռ 2013թ. օգոստոսին էր պնդում, որ պետք չէ Երևանին ստիպել «ընտրություն կատարել», այլ ընդհակառակը՝ քաջալերում էր օգտագործել Հայաստանի հետ հարաբերությունները իբրև մոդելային օրինակ, որ ԵՄ-ը և Ռուսաստանը կարող են նաև համագործակցել, ինչպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունում են համագործակցում Ֆրանսիան, Ռուսաստանը և ԱՄՆ-ը՝ անկախ աշխարհաքաղաքական մրցակցությունից այլ ռեգիոններում: Իսկ «ընտրություն կատարելու» հարցում այլընտրանք չէր թողել Բրյուսելը: Սվիտալսկին մեջբերում է ԵՄ բարձր հանձնակատարի գրասենյակի հայտարարությունը. *«...Եթե Հայաստանը միանա որևէ մաքսային միության, դա չի լինի համադրելի Խորը և համապարփակ ազատ առևտրի երկկողմ համաձայնագրի հետ...»*: Այս հայտարարությունը, թերևս, ցրել էր Հայաստանի պատրանքները, իսկ Ուկրաինայի ուղղությամբ ընթացող ԵՄ-ՌԴ առճակատումը, Մոսկվայում նոր անհանգստությունների սրացումը, ինչպես նաև որոշ այլ հանգամանքներ սպառել էին պաշտոնական Երևանի համար մանևրելու հնարավորությունները, իսկ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից տնտեսական ու ռազմական բնույթի նոր առաջարկությունների ֆոնին Հայաստանի նախագահի որոշումը դարձել էր միայն բնական ու անայլընտրանքային: Այս պարագայում **Սվիտալսկու պնդումը, թե Եվրոպայում «...ամուր կոնսենսուս կար առ այն, որ Արևմուտքը չպետք է ստիպի Հայաստանին աշխարհաքաղաքական ընտրություն կատարել»**, միայն հերթական օրինակն է այս գրքում առկա ներքին հակասությունների: Բացատրությունը, թե ԵՄ չինովնիկների հայտարարությունները բխում էին ընդամենը երկու մաքսային ռեժիմների անհամատեղելիության «խիստ տեխնիկական տեսանկյունից» ընդամենը փորձ են կոծկելու թե՛ ԵՄ-ի, թե՛ Հայաստանի համար կորսված հնարավորության

մեղավորներին: Հատկանշանական է, որ Սվիտալսկին մեկ այլ հատվածում ինքն է ներկայացնում Հայաստանի դիվանագիտական ճկունության աշխարհաքաղաքական սահմանափակումները և այլընտրանքների բացակայությունը:

Իհարկե, Ռուսաստանի հետ առճակատումը հաջորդ ԵՄ ընտրությունների արդյունքում բերեց Եվրահանձնաժողովի ավելի ճկուն կազմի, իսկ մասնավորապես Ընդլայնման հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն դուրս մղվեց թե՛ եվրոպական, թե՛ չեխական քաղաքական ներկայանակից, բայց դա որևէ կերպ չմեղմեց ՀՀ-ԵՄ հարաբերություններին նրա հասցրած վնասը: Ի դեպ, դեսպան Սվիտալսկին և հանձնակատար Ֆյուլեն 1980-ականների սկզբին ավարտել են Մոսկվայի հայտնի ՄԳԻՄՕ-ն, ինչը թերևս որևէ կերպ չի մեղմել Ռուսաստանի հանդեպ նրանց մերժողական ընկալումները:

Այս հարցը ուղղակի առնչություն ունի նաև ներքաղաքական և բարեփոխումների օրակարգի հետ: ԵՄ կողմից տարիներ ի վեր ֆինանսապես սնուցվող ՀԿ-ները և «կարծիք ստեղծող» փորձագետները, որոնց մի մասը անհատապես նշված են Սվիտալսկու գրքում, և որոնք մամուլի և համացանցի ազատության պայմաններում տարեցտարի ընդլայնել էին իրենց հանրային նշանակությունը, 2013թ. սեպտեմբերից ի վեր սկսեցին սուր քննադատության ենթարկել իշխանություններին՝ հօգուտ ԵԱՏՄ անդամակցության սեպտեմբերի 3-ին կայացված որոշման պատճառով: Տարօրինակ է, որ [ԵՄ ֆինանսավորմամբ ECORYS կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրությունը](#), որը հրապարակվեց 2013-ի սեպտեմբերի վերջին միայն, և համաձայն որի Հայաստանի ՀՆԱ-ն միայն չնչին կերպով էր շահելու DCFTA-ի կնքման արդյունքում բուն առևտրային ռեժիմի փոփոխությունից, այդպես էլ մնաց միայն ՀՀ իշխանությունների «գրույցի կետերում»: Ո՛չ ԵՄ առաքելությունը, ո՛չ Բրյուսելը, ո՛չ էլ ակտիվ քաղաքացիական հասարակությունը այդպես էլ երբեք հղում չարեցին այդ եզրակացություններին, կամ չպատվիրվեց նորը: Ամբողջացնելով քաղհասարակության թեման՝ նշենք գրքում բերված ԵՄ կառուցողական դերի օրինակը՝ 2017թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, երբ ԵՄ հորդորով ընտրական օրենսգրքի շուրջ աշխատանքներին միացած ՀԿ ներկայացուցիչները վերջում որոշեցին չստորագրել համատեղ փաստաթուղթը: Ուստի զարմանալի էլ չէ, որ քաղհասարակության հետ երկխոսությանը աջակցելու խնդրանքով իշխանությունները հենց Սվիտալսկուն էին դիմել: Ավելի ուշ՝ CEPA-ի կնքման համատեքստում դեսպանը պատմում է, որ կառավարության ներկայացուցիչները իրեն անակնկալ խնդրանքով էին դիմել՝ քաղհասարակության հետ կամուրջներ կառուցելու համար: Իհարկե, նա փորձում է ամեն կերպ ձերբազատվել առաջատար ՀԿ-ների վրա ազդեցություն ունեցողի պիտակից և վերջիններիս ներկայացնել իբրև ազատ

միավորներ, բայց, ինչպես հայտնի է, Հայաստանում և այլուր դա թերևս «*le secret de polichinelle*» է դարձել:

Հայաստանի «աշխարհաքաղաքական ընտրության» թեման արծարծվում է նաև 2018թ. ապրիլյան հեղափոխության համատեքստում: «Մարդիկ, որոնց դուք աջակցում եք ֆինանսապես, հարթակից խոսում են ցուցարարների հետ»,– փոխանցում է ապրիլյան օրերին մի բարձրաստիճան պաշտոնյայի խոսքերը Սվիտալսկին: Դեսպանը հաստատում է նաև Հայաստանում դեռևս պահպանվող համատարած ընկալումները, որ հետխորհրդային տարածքում, «ներառյալ Հայաստանի համար որոշ շատ կարևոր երկրներում», հետևում էին հայկական հեղափոխությանը և դրա արդյունքներին որոշակի զգուշավորությամբ՝ նոր իշխանությունների շարքերում տեղ գտնող արևմտյան ոչ կառավարական կառույցների տեղական ներկայացուցիչների ներգրավման պատճառով: Չնայած այս ամենին, **պաշտոնաթող դեսպանի գնահատմամբ, Հայաստանի արտաքին կողմնորոշման փոփոխությունը «անխուսափելի է», ինչին Ռուսաստանը չի կարողանալու հակադրվել, քանի որ չունի այլընտրանքային քաղաքական ֆիզուրներ և կհանդիպի հայ հասարակության «միասնական» դիմադրությանը:**

Մյուս կողմից, իհարկե, դեսպան Սվիտալսկին հավաստում է, որ նոր իշխանությունները ամեն առիթով վերահաստատում էին «Հայաստանի արտաքին քաղաքական գծի անփոփոխ լինելու հանգամանքը», ինչը «արևմտյան որոշ դիտորդների կարծիքով» շատ դեպքերում անտեղի էր:

Ընդհանրապես, դեսպան Սվիտալսկին իր հուշերում շոայլորեն գովերգում է Հայաստանի հեղափոխական իշխանություններին, նույնիսկ կոչ անելով նրանց նկատմամբ սահմանել, բանկային լեզվով ասած, «*արտոնյալ ժամանակահատված*»՝ աչք փակելով սխալների կամ բացթողումների վրա: Արդարամիտ լինելով այս փիլիսոփայության մեջ՝ նախկին դեսպանը այնքան է տարված հեղափոխականներին սատարելու զեղումներով (որոնց ընդամենը մի զվարճալի դրվագը իր կնոջ համար հեղափոխական վարչապետի ստորագրությամբ հեղափոխական գլխարկ խնդրելն է), որ անում է ակնհայտ թյուր պնդումներ: Նորից ընդունելով աշխարհագրությամբ թելադրված սահմանափակումները՝ Սվիտալսկին նշում է. «Հայաստանի տնտեսական կապերը պետք է վերահավասարակշռվեն... և այդ առումով հետհեղափոխական իշխանությունների ռազմավարությունը՝ հարևանների վրա շեշտադրումն ավելացնելու առումով իմաստուն որոշում է»: Բայց այս «իմաստուն որոշման» արտահայտումները (օրինակ՝ Իրանի հետ բարձրավոլտ ցանցի կառուցում) նախագծվել են դեռևս նախորդ իշխանությունների օրոք: Վրաստանի դեպքում ընդհանրապես առարկայական որևէ

նոր բան չի նշվում՝ որպես «իմաստության» օրինակ բերելով միայն փոխայցերի ակտիվացումը: Նախկինում հայտնի փորձագետը, որ ներկայումս բարձրաստիճան պաշտոնյա է, այս դեպքում իրեն հատուկ ոճով կնշեր, որ «առաջնորդների միջև շուն նվիրելը աճել է 100 տոկոսով»:

Ինչևէ, պաշտոնավարման տարիներին ԵՄ դեսպան Սվիտալսկին նախընտրում էր զերծ մնալ Հայաստանի աշխարհաքաղաքական զգայնությունների վերաբերյալ դատողություններից, իսկ ԵՄ գրասենյակի գործընկեր կազմակերպությունները, ինչպես զարգացումները ցույց տվեցին, «ուկրաինական» սցենարով շարժվելու կոչերով էին հանդես գալիս:

Փորձառու դիվանագետ Սվիտալսկին նախընտրում է գրքում այս խնդիրներին տալ ընդամենը հանրաճանաչ, բայց ոչ իրատեսական բացատրություններ, որոնք չափազանց հետաքրքիր կլինեին ընթերցողի համար: Եվս մեկ արժեքավոր դիտարկում, որը շատ ավելի մեծ կիրառական նշանակություն կունենար ԵՄ-ՀՀ հարաբերությունների համար 2011-2013 թվականներին. դեսպան Սվիտալսկին պնդում է, որ Հայաստանն իր բարեփոխումների խորությամբ *«ԱԳ մյուս երկրներից ամենաարագն էր շարժվում բանակցային գործընթացում»*: Բայց 2013-ի կարևոր երկիրը Ուկրաինան էր, ապա Վրաստանն ու Մոլդովան՝ հայտնի հետևանքներով...

4. 2013-ԻՑ ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐԸ ԵՎ ՀՀ-ԵՄ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ (ՀԸԳՀ) ԿՆՔՈՒՄԸ 2017-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

Ցավոք, դեսպան Սվիտալսկին չի ներկայացնում, թե որոնք են Երևանի, Մոսկվայի և Բրյուսելի դասերը 2013թ. Ասոցացման համաձայնագրի տապալումից՝ փոխարենը փորձելով անլրջացնել այն համընդհանուր ընդունելի ձևակերպումը, որ երկու տարի անց սկսված նոր բանակցային գործընթացը *«...ԵՄ կողմից սեփական սխալի ընդունումն էր»*: Եթե չկար որևէ երկրի պարտադրված «կամ/կամ» ընտրություն, եթե չկար քաղաքացիական հասարակության և մեդիա ռեսուրսների մոբիլիզացիա աշխարհաքաղաքական նպատակների հասնելու համար՝ հարցական է մնում, թե ինչն էր Ուկրաինայում պատերազմի բռնկման պատճառը: Ռուսական ծավալապաշտությունը միայն ամենահեշտ մարսվող դեղատոմսի է նման այս ճանապարհին ԵՄ ռազմավարական սխալները բացատրելու համար:

Լինելով նորմատիվ քաղաքական միավոր՝ Եվրոպական միության դիվանագետները երբեք չպետք է խուսափեն նաև քաղաքական ռեալիզմի ու սթափ

հաշվարկների վրա հիմնված բաց քաղաքականություն վարելու հանգամանքից: Ի վերջո, իրապաշտությունն է մնում բոլոր երկրների քաղաքականության հիմնական առաջնորդող աստղը: Այս առումով միայն բնական են այն դիտարկումները, որ Հայաստանի շատ փորձագետներ ու գործիչներ պնդել են, ինչպես մեջբերված է գրքում, ԱԳ ծրագրի աշխարհաքաղաքական նախագիծ լինելու մասին, որի նպատակն էր Ուկրաինան Ռուսաստանից անջատելը: Սվիտալսկին նույնպես հպանցիկ նշում է, որ «ԵՄ աջակցությունը չի կարող դիտարկվել իբրև լուր քարեգործություն» (Այս միտքը վերջերս ավելի հաճախ է կրկնվում Բրյուսելից՝ Ուկրաինայի հեղափոխական նախագահ Վլադիմիր Զելենսկու հասցեին): Սա որևէ կերպ չի նսեմացնում ԵՄ-ի փափուկ ուժի կամ նորմատիվ միավորի ձեռքբերումները արդի աշխարհակարգում, որի համար Եվրոպական հանձնաժողովը արժանացավ նաև Խաղաղության Նոբելյան մրցանակի:

«Երևանում պաշտոնավարող ցանկացած դիվանագետի համար պարզ էր, որ Սերժ Սարգսյանը ցանկանում էր կնքել այդ պայմանագիրը: Նա ցուցում էր փվել իր բանակցային թիմին կառուցողական դիրք բռնել և նույնիսկ պատրաստ էր անձամբ ներգրավել Հայաստանի գործընկեր երկրների հետ՝ վերջիններիս վերապահումները հանելու նպատակով»,– գրում է Սվիտալսկին՝ բացեիբաց ակնարկելով, որ 2013-ի դասերը առնվազն պաշտոնական Երևանը սերտել էր լիարժեք: Մինևույն ժամանակ Սվիտալսկին չի կարողանում զերծ մնալ անգամ անտեղի քննադատությունից, ասելով, որ «...երբեմն, օրինակ 2016-ի մայիսին, բանակցությունների ուղիղ դանդաղելու պատճառները դժվար էր ըմբռնել Եվրոպական կողմի համար»՝ հրնթացս մոռանալով, որ փոքր Հայաստանի փոքրաթիվ դիվանագիտական կորպուսը 2016-ի մայիսին թերևս կարող էր զբաղված լինել քառօրյա պատերազմի հետևանքներով:

Նա նաև գրում է, որ **նոր համաձայնագրի հավելվածներում նշված տարբեր «նշածողերն ու սրանդարտները... երբեմն ավելի պահանջկոտ էին, քան Վրաստանի և Ուկրաինայի Ասոցացման համաձայնագրերը»**: Սա չափազանց հետաքրքրական դիտարկում է, եթե հաշվի առնենք, որ շատ բարդ 2013թ. ընթացքում ընդհանրապես նման քաջալերանք չի հնչեցվել ՀՀ իշխանությունների հասցեին՝ մասնավորապես ԵՄ ներկայացուցչությունից կամ հասարակական դաշտից, ինչը կարող էր հավելյալ ուժ տալ Հայաստանի էլիտայի ներսում գտնվող Եվրոպամետ գործիչներին և առաջ տանել համատեղ օրակարգը: Ընդհանրապես, 2013-ի դասերի քննարկումը գրքույկում թողնում է երկակի տպավորություն՝ մակերեսային տեղեկացվածության կամ սեփական գործընկերներին քննադատելուց խուսափելու առումով: «Որոշ հայ պաշտոնյաներ, ում Բրյուսելը համարում էր Եվրոպամետ

կողմնորոշում ունեցող գործիչներ, առանձնագրույցներում ավելի շատ կողմ էին արտահայտվում ԵԱՏՄ-ին անդամակցության հեռանկարին»,– գրում է Սվիտալսկին՝ հակասության մեջ մտնելով մեկ այլ գլխում արձանագրված իրողության հետ առ այն, որ Հայաստանի համար անվտանգային շահերը միշտ եղել և մնում են առաջնային:

Սեփական տնային աշխատանքը լավ պատկերացնող Հայաստանի իշխանությունները խորհրդարանական ընտրություններից հետո՝ 2017-ի ամռանը նախագահ Սերժ Սարգսյանի ցուցումով ստեղծել էին ոչ ֆորմալ խորհրդատվական մարմին՝ Ազգային ժողովի ղեկավարության և համապատասխան գերատեսչությունների փոխնախարարների մակարդակով՝ վերահսկելու և առավել ճշգրիտ կանոնակարգելու պետության բոլոր գործողություններն ու հայտարարությունները՝ թե՛ Բրյուսելում, թե՛ Մոսկվայում որևէ մեկի մոտ հավելյալ անհանգստություններ առաջացնելուց խուսափելու և նոյեմբերին ՀՀԿ-ն ստորագրելու համար:

Չցանկանալով քննադատել հեղափոխական իշխանություններին 2018թ. ապրիլին խորհրդարանում միաձայն վավերացված ՀՀԿ-ի կենսագործման ճանապարհին բացթողումների ու սխալների համար՝ Սվիտալսկին միայն բավարարվում է նշելով, որ անփորձ իշխանությունները պետք է պայմանագրի իրականացման համար կազմակերպված ջանքեր գործադրեն՝ մի խորհուրդ, որը դեռ լավելու կարիք ունի: 2017-2018թթ. տեխնոկրատ կառավարության հասցեին դրվատանքի բոլոր խոսքերով հանդերձ, Սվիտալսկին նշում է, որ Կարեն Կարապետյանի առաջնահերթություններում ԵՄ-ը 17-րդ տեղում էր՝ անհասկանալի թողնելով թե ինչի մասին է խոսքը, քանի որ առնվազն [2017-2022թթ. կառավարության ծրագրից](#) նման տպավորություն չի ստեղծվում:

Անկախ հեղափոխական հուզականությանից, որից Սվիտալսկին զերծ չի մնում, ՀՀ-ԵՄ հարաբերություններում այդպես էլ հեղափոխություն չի արձանագրվում: «Լիարժեքորեն վստահելով նոր կառավարության բարի նպատակներին և հավատարիմ իրանց առաջնորդին»՝ Բրյուսելը, այնուամենայնիվ, «շարունակում է հայկական կողմի պահանջների վրա հիմնված մոտեցումը»: «ԵՄ աջակցությունը աճեց գրեթե երկու անգամ»,– պատմում է Սվիտալսկին, թեև, օրինակ՝ COVID-19-ի համավարակի դեմ պայքարում, ինչպես մյուս հարցերում, [Հայաստանը հենց երկու անգամ հետ է մնում հարևան Վրաստանից](#):

Ի վերջո, Սվիտալսկին չի կարողանում որևէ կերպ բացատրել, թե ինչու «ցավալիորեն (2020-ին սպասվող արդյունքները) շատ ավելի համեստ

ստացվեցին, քան կարող էին, օրինակ՝ նույն վիզաների ազատականացման հարցում»:

5. ԵՄ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ 2018Թ. ԱՊՐԻԼԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ. 2018Թ. ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅԱՆ «ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ» ԵՆԹԱՏԵՔՍԸ

1996 թվականից ի վեր Եվրոպական միությունը եղել է Հայաստանում բարեփոխումների օրակարգի կարևորագույն գործընկերներից մեկը՝ բոլոր իշխանությունների համար: ԵՄ բոլոր կառույցները, ներառյալ՝ Երևանում մշտական ներկայացուցչությունը, ակտիվորեն աշխատել են իշխանությունների հետ ժողովրդավարացման լայն օրակարգի շուրջ: Հայաստանում իրականացված ԵՄ տարբեր ծրագրերի արդյունավետության վերաբերյալ կարող են շատ հարցեր լինել, ներառյալ՝ հասարակական հատվածի կազմակերպությունների ու անհատների ընտրության և ծրագրերի բովանդակության տեսանկյունից, ինչը ի ցույց դրվեց [շուրջ 1 մլրդ դրամի հափշտակության գործով քրեական գործի հարուցմամբ](#) 2018-ի ապրիլին:

ՀՀ-ԵՄ հարաբերությունների վերաբերյալ գրքում նկարագրված կարևորագույն դիտարկումը հետևյալն է. **«2018-ի հեղափոխությունը հրաշք էր, որ հույսի առկայծումներ ստեղծեց աճող հոռետեսական գաղջի դեմ: Հանկարծ տրանսֆորմացիայի վերաբերյալ բոլոր զրույցները և ռեֆորմների աջակցությունը տրանսմյակներ շարունակ ինչ-որ հրաշքով սկսեց իմաստ ստանալ»:** Այլ կերպ ասած՝ Հայաստանի իշխանությունները ԵՄ հետ համագործակցությամբ ստեղծել էին բոլոր անհրաժեշտ կառուցակարգերը Հայաստանի քաղաքական, սոցիալական ու տնտեսական զարգացման համար, և պատեհ կլիներ, եթե ԵՄ պաշտոնյա Սվիտալսկին խիզախություն ունենար այդ ամենն ուղիղ ասելու: *Սակայն «Սասնա ծռերին» «Եվրոպամեյր ազգայնական ուժ» անվանող գործչից, թերևս, նման գնահատականը անսպասելի կլիներ:* Պարզվում է՝ նախորդ իշխանությունները օգտագործում էին ԵՄ հետ համագործակցությունը ինստիտուցիոնալ մեխանիզմներ ստեղծելու համար՝ անկախ հրնթացս տարբեր կողմերից հնչող քննադատությունից, իսկ նոր իշխանությունները նախորդ երկու տարիներին այդպես էլ չեն կարողացել որևէ նոր օրակարգ կառուցել ԵՄ հետ քաղաքական հարաբերություններում՝ մի կողմ թողնելով ներդրումների իսպառ բացակայությունը:

Խոսելով Հայաստանում միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ԵՄ դերի մասին, Սվիտալսկին նշում է, որ նրանք հետխորհրդային տարածքում ի սկզբանե որդեգրել էին **«ռազմավարական համբերության» սկզբունքը**՝ որպես հիմնական

թիրախ ընտրելով մարդու իրավունքների ոլորտում հետընթաց թույլ չտալը, իսկ երկարատև նպատակ հռչակելով դեմոկրատական բարեփոխումները՝ «երբ դրա համար պատեհ հնարավորություններ կստեղծվեն»:

Եվ այդ պատեհ առիթը, ըստ դեսպանի, ստեղծվեց ապրիլյան հեղափոխությամբ:

Էջֆորիկ շրջանի նկարագրությունից հետո Սվիտալսկին գրում է հայկական հեղափոխության վերաբերյալ գրքում տեղ գտած ամենաանկեղծ դրվագներից մեկը.

«Շատ շուտով Արեմուտքը սկսեց չհասկանալ այլևս, թե ինչ է կատարվում հեղափոխական զարգացումներում»,– գրում է նա՝ բերելով երեք պարզ օրինակ.

- Նոր առաջնորդները հարկ չհամարեցին բացատրել Արևմուտքին, թե ինչ է կատարվել Հայաստանում, և որոնք են հետհեղափոխական բարեփոխումների ուղղությունները՝ «հավանաբար կարծելով, որ ամեն ինչ պարզից էլ պարզ է»:

- «Հայաստանում ցանկացած դիվանագետի համար մասնագիտական հաճույք է միշտ եղել այն, որ քաղաքական գործիչները և պաշտոնյաները միշտ պատրաստակամ են եղել հանդիպել նախկինում: Հեղափոխական ժամանակներում Արևմուտքի դիվանագետները չէին հասկանում, թե ինչու են իշխանությունները այդքան փակ: Երբեմն դա վերագրվում էր անփորձությանը և Արևմուտքի հանդեպ հաղորդակցությունների ռազմավարություն չունենալու հանգամանքին»:

- Նոր իշխանությունները կասկածով էին վերաբերվում Արևմուտքին՝ համարելով, որ տարիներ ի վեր ԵՄ-ը պարտակել է նախկին իշխանությունների սխալները: Այդ կասկածամտությունը, ըստ Սվիտալսկու, փոխանցվում էր նաև Արեմուտքի գործարար շրջանակներին: **«Որոշ դիվանագետներ գտնում էին, որ նման կասկածամտությունը նախկինում արված արևմտյան ներդրումների նկատմամբ բերելու է նոր իշխանությունների կողմից այդ ծրագրերի նկատմամբ դեմարշի»,** ինչը վաղ ազդեցություն թողեց ներդրումներ ներգրավելու ջանքերի վրա՝ ըստ Սվիտալսկու: **Ավելին, շուտով հեղափոխականները սկսեցին հանդես գալ կառավարման համակարգի պահպանման օգտին՝ Հայաստանը դարձնելով «մեկ մարդու շոու»՝ ինչից վոյունտարիզմի հոտ էր գալիս և դա «վաղ է վաճառվում Արևմուտքում»:**

Այս երեք կետերի քննարկման մեջ ազգությամբ լեհ դիվանագետ Սվիտալսկին որևէ կերպ չի կարողանում ընկալել քաղաքական պոպուլիզմի վտանգները՝ թե՛ ներքաղաքական, թե՛ ՀՀ-ԵՄ հարաբերությունների համար, թեև իր հայրենի Լեհաստանում այդ գործընթացները բազում աղետներ արդեն բերել են: Միգուցե հենց դա է պատճառը, որ նրա և մյուս արևմտյան դիվանագետների առջև, ինչպես ինքն է պնդում, փակվեցին մինչ այդ լայնորեն բաց դռները

կառավարական միջանցքներում: Չէ՞ որ պոպուլիստ հեղափոխականները, ինչպես իրենք են բազմիցս հայտարարել, համարում էին, որ «Ժողովրդավարության բաստիոն» Հայաստանին այլևս բոլորն են խոնարհվելու: Դժվար է ասել՝ սա կարճատեսությա՞ն, թե՞ միամտության արդյունք է՝ երկու կողմերում էլ:

Ցավոք, Հայաստանի տեղն ու դերը չբարելավվեց ո՛չ Ռուսաստանի և ո՛չ էլ Արևմուտքի օրակարգերում: Իհարկե, կարելի է սա բացատրել գրախոսության սկզբում արժարժված միջազգային իրադրությամբ, բայց ԵՄ դիվանագետի շռայլ դրվատանքի խոսքերի ֆոնին միակ ակնհայտ եզրակացությունը մնում է Հայաստանի նոր իշխանությունների անկարողությունը: Ո՛չ արցախյան բակակցություններում Հայաստան-Ադրբեջան պարիտետը փոխվեց, ո՛չ ԵՄ աջակցությունն ավելացավ, ո՛չ էլ ներդրումներ հոսեցին: Սվիտալսկու ջանքերը ԵՄ հետ հարաբերությունների կոլապսի պատճառ տեսնել «հանրապետականներին», իսկ Կրեմլի հետ հարաբերությունների բացակայության մեղավոր հռչակել երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ միայն արդարացումների են նման: Պնդումը, թե այնուամենայնիվ հետհեղափոխական Հայաստանի «ամենասահուն հարաբերությունները» ԵՄ հետ էին զարգանում, դեռ ապացույցի կարիք ունի: **«Ակնհայտ է, որ Հայաստանը կարող է և պետք է ունենա մեծ ակնկալիքներ Արևմուտքի վերաբերմունքի փոփոխության առումով: Ցավոք, դա դեռ հնարավոր չի եղել»,- դառնությամբ արձանագրում է ԵՄ նախկին դեսպանը:**

Հասնելով իր եզրակացություն-խորհուրդներին՝ Սվիտալսկին անում է թերևս գրքույկի ամենակարևոր արձանագրումը, ինչը հարցականի տակ է դնում մինչ այս արտահայտված գովեստի բոլոր խոսքերը.

«Կառավարության քաղաքականության գնահատականը պետք է արդար լինի: Հեղափոխությունից հետո Արևմուտքը կառավարող նոր թիմին տվեց «արտոնյալ ժամանակահատված» և զերծ մնաց համատեղ օրակարգի իրականացման վերաբերյալ քննադատություններից: Բայց ԵՄ-ը պետք է հստակեցնի նրանց համար, որ մենք աջակցում ենք քաղաքականություններին, այլ ոչ անհատներին: Եվրոպական արժեքներից և համատեղ օրակարգից շեղվող քաղաքականությունները պետք է ժամանակին արձանագրվեն և բացահայտվեն»:

Այս գրքում հեղինակի կողմից հայկական իրականությունում իր ցանկացածը իրականության տեղ դնելը, իհարկե, ցավալի է՝ որպես այս մեծ աշխատանքի մսխված հնարավորություն: Ասվածի խոսուն փաստ է հեղինակի պնդումը, թե հետհեղափոխական հասարակությունը միասնական է: Ցավոք, սոցիարցումներում 45-55 տոկոս մասնակցության մերժումները ցույց են տալիս ավելի բարդ պատկեր:

Բայց Սվիտալսկին, իհարկե, անհույս լավատես չէ. նա ընդունում է, որ հեղափոխական էյֆորիան անցնում է. «...Կառավարիչների հեղափոխական հռետորաբանությունը խամրում է և դառնում ավելի ու ավելի նվազ համախմբող»:

6. ԱՐՅԱԽՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՈՒՀԱՆԸ

«Հեղափոխությունը ողջ աշխարհում առաջ բերեց մեծ համակրանք դեպի Հայաստանը», – գրում է Սվիտալսկին: Բայց արդյո՞ք այս հանգամանքը կարող էր կամ պետք է ազդեր Հայաստանի անվտանգային խնդիրների վրա և, հատկապես, բացեր «հնարավորությունների պատուհան» արցախյան կարգավորման հեռանկարում:

Թերևս որևէ հեղինակավոր մասնագետի գիրք ընթերցելու կարիք չկա հասկանալու համար այն պարզ ճշմարտությունը, որ Ադրբեջանի (և Թուրքիայի) գործող իշխանությունների էությունը և մաքսիմալիզմը, անկախ ապրիլյան հեղափոխությունից, պետք է մնային նույնը: Փոխվել կարող էր միայն Հայաստանի արձագանքը կամ դիրքորոշումը, որն էլ տեղի ունեցավ՝ ի դեմս նոր ղեկավարի հայտնի երկու նառատիվների, որոնք Սիվտալսկին երկրորդում ու լեզբիտիմացնում է.

● *Հայաստանը չի կարող այլևս ներկայացնել Արցախի ժողովրդին, քանի որ չի ընտրվել նրանց կողմից: Արցախը պետք է ներկայացնի Արցախի ընտրված իշխանությունը:*

● *Լուծումը պետք է բավարարի Հայաստանի ժողովրդին, Արցախի ժողովրդին և Ադրբեջանի ժողովրդին:*

Մինչ հետհեղափոխական զարգացումներին անդրադառնալը, դեսպան Սվիտալսկին տարբեր համատեքստերում շարադրում է իր նկատառումները Հայաստանի անվտանգային և, մասնավորապես, արցախյան բանակցային գործընթացի առնչությամբ:

«Հայերի համար գլխավոր հղման կետը իրենց երկրի նկատմամբ ցանկացած զարգացում գնահատելու համար՝ անվտանգության հարցերն են», – գրում է հեղինակը: Ըստ նրա՝ դեռ 2015թ. ընթացքում Հայաստանի իշխանությունների վրա «ուժեղացել էին միջազգային միասնական ճնշումները «Լավրովի պլանով» կարգավորման համաձայնելու համար՝ նույնիսկ ժամանակավոր որևէ լուծմամբ»: Միևնույն ժամանակ հայ դիվանագետները հերքում էին «Լավրովի պլանի» գոյությունը, թեև շատ օտար դիվանագետներ նույնիսկ խոսում էին դրա կոնկրետ կետերի ու բովանդակության մասին: Սա, ըստ Սվիտալսկու, ցույց էր տալիս, որ հայկական կողմն այնքան էլ

բավարարված չէ այդ տարբերակով և կուլիսներում բողոքում էին, որ ասես այն «գրված լինի Բաքվում»:

Պետք է հավանաբար ընդգծել, որ ԵՄ-ն՝ ընդհանուր առմամբ և դեսպան Սվիտալսկին՝ մասնավորապես երբեք մաս չեն կազմել արցախյան բանակցային գործընթացին, ուստի այս մասով Սվիտալսկու պնդումները հավատար չեն ներշնչում, քանզի քիչ հավանական է, որ նա, քաղաքային բամբասանքներից անդին, կարող էր տեղյակ լինել բանակցությունների փուլերից կամ դրանց վերջնական արդյունքներից:

Հաջորդ երեք տարիների մասին Սվիտալսկու նկատառումները կարելի է ամբողջացնել հետևյալ մեջբերմամբ.

«2016-ի ապրիլյան պատերազմը ավելի բարդացրեց այդ շուկը: Թվում էր, որ Սարգսյանը տրվում է արտաքին ճնշմանը... Դիվանագիտական շրջանակների տպավորությունն այն էր, որ Սարգսյանը ցանկանում էր հետաձգել գործարքը, ոչ թե մերժում էր այն... Եվ 2016-ի հուլիսյան դեպքերը («Սասնա ծռեր» խմբավորման կողմից պատանդառությունը ՊՊԾ գնդում - «Լույս») ուժեղ պատճառ հանդիսացան այդ գործարքի հետաձգման համար... Իսկ 2018թ. ապրիլի 23-ին ենթադրաբար արված առաջարկը՝ իր հրաժարականը հետաձգել մինչև աշուն, պայմանավորված էր միայն իր՝ կարգավորման պայմանագիր կնքելու հարցում քաղաքական պատասխանատվության զգացումով... Արևմտյան դիվանագետները Սերժ Սարգսյանի հրաժարականը համարեցին հայրենասիրական քայլ»:

Թե որքանով են այս մեկնաբանությունները կամ ԵՄ դեսպանի տեղեկացվածության աստիճանը համապատասխանում իրականությանը, կարելի է ընդամենը ցույց տալ 2016թ. ապրիլյան պատերազմի վերաբերյալ Սվիտալսկու վերապատմածով, որը գրեթե բառացի կրկնում է նոր իշխանության բառարանում ներքաղաքական պայքարի արմատավորված լեզբենդները՝ *բանակում զենք չկար, սնունդ չկար...* Այս լեզբենդները տարիներ ի վեր կրկնում էին թե՛ ընդդիմադիրները, թե՛ հասարակական հատվածի ներկայացուցիչները:

Պարզվում է, որ ԵՄ-ը նախկինում հետազոտություններ է ֆինանսավորել խաղաղության համաձայնագրի կնքման սոցիալ-տնտեսական հետևանքների վերաբերյալ: Ըստ դրանց հեղինակների՝ կարգավորումը կարող էր ավելացնել «մի քանի տոկոս ՀՆԱ աճ»: «ԵՄ-ը նաև հանձնառություն էր ստանձնել հետկոնֆլիկտային վերակառուցման ջանքերին մասնակցություն ունենալու առումով»,– գրում է Սվիտալսկին: Այնուամենայնիվ, կարգավորման համար դեռևս պատշաճ պայմաններ

չեն ստեղծված, և նույնիսկ 2020թ. հուլիսին կարճատև էսլակացիա ստեղծվեց միջպետական սահմանի Տավուշի հատվածում: Սվիտալսկին համարում է, որ Հայաստանին ու Ադրբեջանին տրվող զարգացման աջակցության փաթեթներում անհրաժեշտ է ներառել նոր «պայմաններ»՝ կողմերի վրա ճնշում բանեցնելու համար: Թերևս ակնհայտ է, որ այդ նոր «պայմանները» ճնշում են լինելու ոչ թե նավթադոլարներով հարուստ Ադրբեջանի, այլ բյուջետային աջակցության կարիք ունեցող Հայաստանի համար:

Արձանագրելով, որ հեղափոխությունը դեպի դրական փոխեց Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը աշխարհում և հատկապես Արևմուտքում, Սվիտալսկին նշում է, որ այդ նոր իրավիճակում այլևս «*բարդ էր լինելու Հայաստանի և Ադրբեջանի միջև հավասարության նշան դնելու նախկին քաղաքականության շարունակականությունը պահպանելը*»: Ցավոք, հետհեղափոխական երկու տարիները փաստում են, որ նոր իշխանությունները մսխեցին այս հնարավորությունը բանակցային գործընթացում, հատկապես՝ Մինսկի խմբի արևմտյան համանախագահներ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի պարագայում:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Վերջին հարցը, որ այս գրախոսության շրջանակներում պետք է տալ. արդյո՞ք դեսպան Սվիտալսկու առաքելությունը Երևանում կարելի է համարել հաջողված: Դատելով գրքույկում ներկայացված հուշերից և մտորումներից՝ հեղինակը չի կարողացել լուծել մարդկային, քաղաքական ու մասնագիտական գնահատականների միջև «ոսկե միջինը» գտնելու խնդիրը:

Գիրքը լի է ներքին հակասություններով, ցանկալին իրականության տեղ ներկայացնելու անսպառ էներգիայով և, որ ամենակարևորն է, չի նշմարում հետագա քայլերը ՀՀ-ԵՄ հարաբերություններում, բացի իբրև թե տեղի ունեցած հեղափոխության համար հայ ժողովրդին դեպի ԵՄ առանց վիզայի մուտք արտոնելու հորդորը: Սակայն պարզ է, որ այս հարցն էլ մոտակա տարիներին չի լուծվելու ոչ այնքան գործող իշխանությունների անկարողության, որքան Հայաստանի հետ կապ չունեցող այլ հանգամանքների բերումով, այն է՝ Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի քաղաքացիների կողմից այս ռեժիմի համատարած խախտումների և միգրանտների ճգնաժամի պատճառներով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր հրավուևքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է հրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: